ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /+374281/ 2 25 22**

<<_____>> _____2021թ. **N _____**

<<ԱՆՏԻՖԵՅՔ.ԱՄ>> ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ
ԽՄԲԱԳԻՐ ԱՍՏՂԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մաթևոսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2021 թվական հունվարի 7-ին հասցեագրված Ձեր 015-21 հարցման (մուտքի ամսաթիվ 18.01.2021թ.)՝ ներկայացնում ենք, որ, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը, կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: Աշխատողների վարձատրության չափն առանձին-առանձին տրամադրելու հնարավորություն չունենք, սակայն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 2020 թվականի համար հատկացվող գումարները, ըստ տնտեսագիտական հոդվածների, երևում են «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ինչ վերաբերվում է մարզպետի կողմից ստացված պարգևավճարի չափին, տեղեկացնում ենք, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի՝ մարզպետը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ, և ստացված եկամուտների մասին հանրամատչելի տեղեկատվությունը հասանելի է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի http://cpcarmenia.am/hy/declarations-registry/ կայքում:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Հեռ. (0281) 2 55 95